CONCOURS D'ENTREE 2025-2026/ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ 2025-2026

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

18/06/2025

9:00-11:30

Temps imparti / Ժամանակը: 150 minutes / 150 րոպե
Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Առաջադրանք 1. (22 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 18 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,5 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 1 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:
Առաջադրանք 2. (14 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 6 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 3. (16 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 6-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
Առաջադրանք 4. (16 միավոր)
4.1., 4,2 առաջադրանքները գնահատվում են 4-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 5. (12 միավոր)
5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 4-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,5 միավոր:

Առաջադրանք 1 (22 միավոր)

1.1. Անհրաժեշտության դեպքում գրել տառերը և կետադրել բնագիրը (18 միավոր):

Հուլիսյան բարկ արևը անխնայորեն խանձում էր ալեծուփ դաշտավայրը: Խորին լռությունը խախտում էին միայն անգղերը, որոնց խռպոտ կռնչյունները կարծես ձուլվում էին կեսօրվա տապին և մարում հուռթի արտերի հեռաստաններում:

Հանդիպակաց բարձունքի լանջին ծվարել էր հայաբնակ մի գյուղ՝ գետնամած հյուղակներով: Տների երդիկներից դարչնագույն ծուխը օղակ-օղակ ձգվում էր երկինքնիվեր՝ աղոտանալով ու ձուլվելով երկնի կապույտին:

Փոքրիկ արտի եզրին կանգնած էին երկու հոգի՝ հայր և որդի: Տղան՝ ինը-տասը տարեկան, մինչև գոտկատեղը հասնող հյուսված ծամեր ուներ, որոնց երբևիցե կտրված չլինելը ցույց էր տալիս, որ նա ընտանիքի մինուճարն է, և նրանից առաջ ծնվածները երկար չեն ապրել, ու այս մեկի կյանքի համար ծնողները ուխտել են սրբերին մինչև տասը տարին լրանալը չկտրել նրա մազերը:

Հայրը հազիվ երեսունհինգ տարեկան լիներ. նա մի այր էր՝ վտիտ մարմնով ու խոր ընկած ակնակապիճներով: Կյանքի անհեթեթ դիպվածները՝ արյունռուշտ մոնղոլների ահասարսուռ բռնությունները, ընտանիքի առօրեական կարիքները, նրան ավելի տարիքով էին ցույց տալիս: Թե՛ արդեն քրքրված ու գունաթափ կապան, թե՛ լայն անդրավարտիքը ցույց էին տալիս, որ նա շինական չէր:

Հայրը հազիվ էր վերցրել մանգաղը իր անընտել ձեռքը և լռելյայն սկսել գործը, երբ լսեց որդու՝ սարսափից խեղդված բացականչությունները:

Դաշտավայրի խորքից (,) փոշու ամպ բարձրացնելով՝ (,) քառատրոփ դեպի նրանց կողմն էին արշավում ինչ-որ ձիավորներ: Մոտեցողները մոնղոլներ էին:

1.2. Նշել այն շարքը, որի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով (2 միավոր):

1) ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ, ՄԱՐ ԱԲԱՍ ԿԱՏԻՆԱ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՀԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ

2) ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՎՐՈՍ, ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵԹՀՈՎԵՆ, ՆՈՐ ԶԵՅԹՈՒՆ, ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ

3) ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ, ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ, ԷԴՄՈՆԴՈ ԴԵ ԱՄԻՉԻՍ, ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

4) ԼՅՈՒԴՈՎԻԿՈՍ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ, ՎԱՆԱ ԼԻՃ, ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են գծիկով (2 միավոր):

1) ցուցահանդես (վաճառք), բերդ (քաղաք), զին (ծառայող), ռուս (թուրքական), գաղափարական (գեղարվեստական)

2) աղբյուր (հուշարձան), հարավ (արևելք), բողոք (դիմում), ավել (պակաս), կաս (կարմիր)

3) Մալաթիա (Սեբաստիա), հլու (հնազանդ), ոչ (ինչ), լեփ (լեցուն), մանր (մունր)

4) հյուսիս (արևմտյան), քաղաք (պետություն), քաղցր (մեղցր), ընկեր (բարեկամ), տասը (տասնհինգ)

2 . Առաջադրանք 2 (14 միավոր)

2. 1. Տրված սյունակներից համապատասխան արմատներ ընտրելով (յուրա-քանչյուր բաղադրիչ գործածել մեկ անգամ)՝ կազմել վեց բարդ բառ (*6 միավոր):*

Թանկարժեք	անվանացանկ	**արժեթուղթ**
հանքանյութ	տնամերձ	**նյութապաշտ**
ողբանվագ	ստվարաթուղթ	**նվագավար / նվագացանկ**
բնաբան	վարչական	**օրնիբուն / օրաբան**
մահասարսուռ	պաշտամունք	**մահամերձ**
տեղաբնակ	հանապազօրյա	**տեղանուն**

2.2. **Ընդգծել կազմությամբ բարդածանցավոր բառերը** *(8 միավոր):*

Դառնաղի, ներածական, վերնագիր, աղեկեզ, առվահան, հաշվեմատյան, կույրաղի, առանձնասենյակ, գործածել, ահագնորեն, տրտմաշուք, կառամատույց, գետնատարած, գարնանամուտ, բազմաքանակ, մածնահամ, դիմաքանդակ, ունայնամիտ:

Առաջադրանք 3 (16 միավոր)

3.1. Ընտրել և գրել հոմանիշների վեց զույգ (6 միավոր):

Պաճուճված, զարդարուն, խոհեմ, ողջամիտ, քսու, երկերեսանի, լրիվ, ամբողջական, խորշակ, սամում, արհավիրք, պատուհաս:

պաճուճված-զարդարուն
խոհեմ- ողջամիտ
քսու-երկերեսանի
լրիվ-ամբողջական
խորշակ-սամում
արհավիրք-պատուհաս

3.2. Ընտրել և գրել հականիշների վեց զույգ (6 միավոր):

Պարզ, ճապաղ, ստույգ, կորով, գլխավոր, դեռատի, սեղմ, զառամյալ, մանվածապատ, անէական, անորոշ, թուլություն:

պարզ-մանվածապատ
ճապաղ-սեղմ
կորով-թուլություն
գլխավոր-անէական
դեռատի-զառամյալ
ստույգ-անորոշ

3.3. Գտնել երկու շարք, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (4 միավոր):

ա) իրար լեզու հասկանալ – միաբանել, շնչի վրա նստել – շտապեցնել, ներս գցել – պահել

բ) վերին արտի ցորեն – բարձրատոհմիկ, խունկ ծխել – երկրպագել, ձվի մեջ մազ փնտրող – չմահավան

գ) տաք գլուխ – կամակոր, մի կաթիլ մեղր – չնչին բանից մեծ աղմուկ, ձեռնոց նետել – մենամարտի հրավիրել

դ) լեզուն իրեն քաշել – լռել, յուղ կապել – գիրանալ, հրապարակ իջնել – հայտնվել

ե) ոտքի վրա – առողջ, բերանը կեղտոտել – հայհոյել, բերանը ջուր առնել – պապանձվել

զ) ճակատ ճակատի զարկել – կռվել, հոնքերը կիտել – մռայլվել, բերանը փակել – լռեցնել

Առաջադրանք 4 (16 միավոր)

4.1. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (4 միավոր):

ա) Հնագույն ժամանակներից մեզ են փոխանցվել հարսանեկան բազմաբնույթ (**ավանդույթներ**, ավանդություններ[1]), որոնք մինչ օրս պահպանվում են:

բ) Քաղաքի բնակիչներն ի վերջո (**տեղի տվեցին**, տեղիք տվեցին)՝ չկարողանալով դիմադրել թշնամու ճնշումներին:

գ) Արքայադստեր (**պճնանքը**, պչրանքը) աչք էր շլացնում իր բազմազանությամբ ու շքեղությամբ:

դ) Ռասայական (խտրությունը, **խտրականությունը**) դեռևս լիովին հաղթահարված չէ աշխարհի շատ երկրներում:

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (4 միավոր):

[1] Տվյալ ենթաառաջադրանքում ճիշտ է համարվում նաև *ավանդություն* բառի ընտրությունը:

Պարտեզի դռնից / դռնով ներս մտնելիս աչքիդ առջև բացվում է զմայլելի մի տեսարան՝ ողողված արևի հոգեպարար ճառագայթներով:

(ողողել, մտնել, դուռ, տեսարան)

4.3. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (8 միավոր):

Առանց դա, հանուն քեզ, տողասկզբեր, իմ վրայով, ի հակակշիռ Արևմուտքից, առանց այս, ինձ հետ միասին, շտապեցրու՛, քանիցս անգամ, ալիքաչափեր, դպրապետներ, սիմվոլիզմներ, մոտեցրի՞ր, առանց թույլատվության, ոչ ոքով, նորից նորոգել, խոնավեցնել, ուշացրինք:

Առաջադրանք 5 (12 միավոր)

5.1. Նշել այն նախադասությունները, որոնցում խնդրառության սխալ կա և ուղղել սխալները (4 միավոր):

ա) Սարոյանն իր վերջին օրերին միայն նրան է թույլ տվել միշտ իր կողքին լինել:

բ) Հավատքի զգացողությունը նրանց ստիպում էր զերծ մնալ անհավատների ազդեցությ~~անը~~ից:

գ) Ների՛ր նամակս ուշացնելու համար. ժամանակ չունեի քեզ գրելու:

դ) Նա միշտ պատկառել էր իր ուսուցչ~~ին~~ից և հիմա չէր ուզում նրան անօգնական տեսնել:

5.2. Նշել այն նախադասությունները, որոնցում համաձայնության սխալ կա և ուղղել սխալները (4միավոր):

ա) Ուսանողների մեծ մասն իջա~~ն~~վ բակ՝ շաբաթօրյակին մասնակցելու, իսկ մյուսները մնացել էին լսարանում:

բ) Լեռնաշղթաներով շրջապատված այդ տարածքում ապրում են այլադավան ցեղեր, ու ոչ ոք նրանց մասին ստույգ ոչինչ չգիտի:

գ) Երբ քամին ցրում է ամպերը, երևում ~~է~~ են աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպը:

դ) Յուրաքանչյուր ոք հավաստում էր այդ խոսքերի ճշմարտացի լինելը:

5.3. Նշել բարդ ստորադասական նախադասությունը պարզի փոխակերպելու ճիշտ տարբերակը (2 միավոր):

Միգուցե գերին իր կյանքին վերջ տար, եթե լիներ բավականաչափ խիզախ և վճռական:

ա) Միգուցե գերին իր կյանքին վերջ տար՝ բավականաչափ խիզախ և վճռական լինելով:

բ) Միգուցե գերին իր կյանքին վերջ տար բավականաչափ խիզախ և վճռական լինելու դեպքում:

գ) Միգուցե գերին իր կյանքին վերջ տար՝ բավականաչափ խիզախ և վճռական լինելով հանդերձ:

դ) Միգուցե գերին իր կյանքին վերջ տար՝ բավականաչափ խիզախ և վճռական լինելու համար:

5.4. Նշել անուղղակի խոսքն ուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (2 միավոր):

Անին ասաց ուղեկցորդ Հայկին, որ իրենք պետք է շարունակեն առաջ գնալ, որովհետև չեն կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և իրենց ընկերները կկորցնեն իրենց հետքը:

ա) Անին ասաց.

- Ուղեկցո՛րդ Հայկ, մենք պետք է շարունակենք առաջ գնալ, որովհետև չենք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և մեր ընկերները կկորցնեն իրենց հետքը:

բ) Անին ասաց ուղեկցորդ Հայկին.

- Մենք պետք է շարունակենք առաջ գնալ, որովհետև չենք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և նրանց ընկերները կկորցնեն իրենց հետքը:

գ) Անին ասաց ուղեկցորդին.

- Հա՛յկ, մենք պետք է շարունակենք առաջ գնալ, որովհետև չենք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և մեր ընկերները կկորցնեն իրենց հետքը:

դ) Անին ասաց ուղեկցորդ Հայկին.

- Մենք պետք է շարունակենք առաջ գնալ, որովհետև չենք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և մեր ընկերները կկորցնեն մեր հետքը: